ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԱՆԱ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով փաստաբան **Լիանա Ռուբենի Սարգսյանի (արտոնագիր թիվ 768)** նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) գլխավոր հաշվապահի **05.02.2026թ.** տեղեկանքի համաձայն՝ **փաստաբան Լիանա Սարգսյանի (այսուհետև՝ Փաստաբան)** անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմում է 241.560 (երկու հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների՝ **2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ: Միաժամանակ վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը:**

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է պահանջն առ այն, որ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներ են՝ ... փաստաբանի՝ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու վերաբերյալ փաստաբանների պալատի հաշվապահի ներկայացրած տեղեկանքը*:

«Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝

–Փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգեր **(Օրենքի 10-րդ հոդված, 4-րդ մաս, 6-րդ կետ).**

–փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, բացառությամբ սույն օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի. **(Օրենքի 19-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):**

– Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ ի թիվս այլնի, ***Օրենքի պահանջների խախտումը****, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև* ***փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը****, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:* **(Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին**

23 փետրվարի 2026թ.
թիվ 151-Ա/ԿԳ-26054

մասի 1-ին և 2-րդ կետեր):

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև՝ Կանոնագիրք**) 2.9.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Պալատի խորհրդի 05.02.2014թ. 3/8-Լ որոշմամբ *փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանված է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ*, իսկ Պալատի խորհրդի կողմից 13.01.2023թ. թիվ 2/6-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի անդամավճարների, հավակնորդների, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու» կարգի (**այսուհետև՝ Կարգ**) 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:*

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ... *Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում <u>առաջին հերթին մարվում է</u> փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում:*

Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:*

Ներկայացված դրույթների համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ փաստաբանի համար, ինչը բխում է նրա կարգավիճակից, ամրագրվում է՝ ի թիվս այլնի, նաև սահմանած չափով և կարգով անդամավճարները մուծելու պարտավորությունը:

Միաժամանակ, Պալատի ներքին իրավական ակտերում ամրագրվել և հստակեցվել են փաստաբանի կողմից անդամավճարները մուծելու պարտավորության կատարման ապահովմանն ուղղված մի շարք դրույթներ՝ ինչպես անդամավճարների չափի ու վճարման կարգի ամրագրման, այնպես էլ դրանց վճարման պարտավորության չկատարմանն ուղղված վարքագծի բացառման վերաբերյալ:

Այս համատեքստում, եթե առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանը չի կատարում հերթական ամսվա

անդամավճարը մուծելու պարտավորությունը, այդ արարքի (վարքագծի) դրսևորումը Կանոնագրքի իմաստով փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմք է:

Տվյալ դեպքում, Փաստաբանն առերևույթ խախտել է վերոհիշյալ կանոնների պահանջները, քանի որ նրա անդամավճարի ընդհանուր պարտքը 05.02.2026թ. դրությամբ կազմում է 241.560 (երկու հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից վերջին 18 ամիսների՝ **2024թ. հունիսից 2025թ. նոյեմբեր ամիսը ներառյալ, կազմում է 90.000 ՀՀ դրամ և վերջինս չի վճարել հերթական ամսվա անդամավճարը**:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի, 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և նույն հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան **Լիանա Ռուբենի Սարգսյանի (արտոնագիր թիվ 768)** նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով (**կարգապահական գործ թիվ ԿԳ-26054**):

2. Տեղեկացնել փաստաբանին, որ՝ Կանոնագրքի 9.1.3 ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման պատճենն ուղարկել Փաստաբանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայան

23 փետրվարի 2026թ.
թիվ 151-Ա/ԿԳ-26054
ք. Երևան